

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ո՛Վ Է ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ՃԱՌԻ ՀԵՂԻՆԱԿԸ

ՀՐԱՉԻԿ ՄԻՐՉՈՑԱՆ

Գրիգոր Նարեկացուն վերագրված մատենագրական գործերի¹ շարքում բացառիկ արժեք ունի «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ» երկը: Ճառի երեք ձեռագրերը և 1852 թ. Կ. Պոլսում հրատարակված տպագիր միակ օրինակը պահպանվում են Մ. Մաշտոցի անվան մատենադարանում: Խնդրո առարկա Ճառի (ումանք այն անվանում են նաև քարոզ) հեղինակային պատկանելության հարցը վերջին շրջանում դարձել է գիտական լուրջ քննարկման առարկա՝ իրարամերժ տեսակետներով: Այսպես, Պ. Խաչատրյանը, հիմք ընդունելով Ճառում տեղ գտած ինքնակենսագրական բնույթի որոշ տեղեկություններ, կտրականապես մերժում է այն Նարեկացուն պատկանելու հնարավորությունը. «Հեղինակն իր մասին ասում է. «... զի ոչ միայն եկի ի պատկեր Արարչին՝ յարգանք՝ եկեղեցոյ ի նա անկայ, և կաթնաբուծ եղեալ ի հոգևոր ստեանցն՝ քահանայ մեծ ի տան նորա մեծարեցայ...» (314)²: Ընդգծված հատվածը ցույց է տալիս, որ հանձին հեղինակի մենք գործ ունենք կաթողիկոս-հայրապետի և կամ եպիսկոպոսապետի հետ, որպիսին Նարեկացին չի եղել: Ի հավելումն այդ խոստովանության՝ քարոզասացը շարունակության մեջ անդրադառնում է «աստուածարկու և քրիստոսաժողով հարանց և հարազատաց եղբարց», որոնք ստանալու են իր, իբրև եկեղեցում Քրիստոսի փոխանորդի, «զօրհնութիւն և զաղօթս» և ինքը պարտավոր է «արկանել ջուր ի վերայ մաքուր ոտից» նրանց՝ «ի տանէ Տեառն բղխմանէ» (315): Հեղինակն ուրեմն սուկական քահանա չէ, ինչպես Նարեկացին է իրեն կոչում, այլ բարձրաստիճան: Քարոզը մեկ ուրիշ մատենագրի գործ է: Եթե ենթադրելու իրավունք վերապահեինք մեզ, կանգ պիտի առնեինք 13-14-րդ դարերում Հայկական Կիլիկիայում գործած որևէ կաթողիկոսի անվան վրա»³:

Միանշանակ համաձայն եմ հարգարժան նարեկացիագետի հետ,

¹ Նարեկացիագետ Պ. Խաչատրյանը դրանց թիվը հասցնում է տասնհինգի (տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 119):

* Բնագրում յարգանդ է. դա է ճիշտը:

² Այն տպագրվել է «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան» (Կ. Պոլիս, 1845) վերնագրով հրատարակության հետ միասին:

³ Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 136:

որ Նարեկացին իսկապես իրեն համարում է «սուկական քահանա», իսկ Ճառի հեղինակը, իր իսկ պնդմամբ, բարձրաստիճան հոգևորական է, ուստի այն չի կարող պատկանել Նարեկացու գրչին, այլ մեկ ուրիշ «մատենագրի գործ է»: Ինչ վերաբերում է ճառասացի կաթողիկոս և այն էլ՝ «13-14-րդ Հայկական Կիլիկիայում գործած» լինելու մասին ենթադրությանը, ապա ներկա դեպքում չեմ ցանկանում անդրադառնալ այդ հարցին, քանի որ իմ տեսակետն արտահայտել եմ տասը տարի առաջ⁴: Այստեղ հարկ եմ համարում հավելել միայն, որ ճառասացի խոսքից հետևում է, որ ինքն այն արտաբերել է, ինչպես դեռ կտեսնենք, X դարի առաջին կեսի վերջին տարիներից մեկի գատկական տոնի ավագ հինգ-շաբթիի ոտնվայի հանդիսավոր արարողության ժամանակ:

Ճառի հեղինակային պատկանելության հարցին հանգամանորեն անդրադարձել է նաև նարեկյան դպրոցի և Գրիգոր Նարեկացու մատենագիտական ժառանգության երկարամյա հետազոտող Հ. Թամրազյանը, որը, ի տարբերություն Պ. Խաչատրյանի, համեմատելով ստուգապես Նարեկացուն պատկանող ստեղծագործությունների (հատկապես Մատյանի) և Ճառի առանձին հատվածներ, հանգել է այն եզրակացության, որ Ճառի հեղինակը Գրիգոր Նարեկացին է: Ավելին, գիտնականը փորձել է որոշակիացնել նաև նրա գրության ժամանակը և ըստ այդմ եզրակացրել, որ ճառը «Գրիգոր Նարեկացու հասուն շրջանի գործերից է եւ գրուած է «Մատենից» առաջ»⁵: Ուշագրավ է, որ նարեկացիագետը, անդրադառնալով ճառագրի բարձրաստիճան հոգևորական լինելու խնդրին, հիմք է ընդունել բանաստեղծի Վարքի տարբերակներում առկա առանձին տեղեկություններ և իբր վարկած ենթադրել, որ Վարքի տարբերակները վկայում են՝ Գրիգոր Նարեկացին «ապրել և կենցաղավարել է եղբոր (Նարեկա վանքի վանահայր Հովհաննեսի – Հ. Մ.) մահից հետո: Այդ դեպքում ո՞վ, եթե «ոչ սուրբ և ուրբ», Հայոց փիլիսոփա և հոգեմատյան հոետոր, աստվածաշնորհ մեծ վարդապետ հռչակված Գրիգորը պետք է ստանձներ վանքի առաջնորդությունը»⁶:

Ցավոք, գիտնականի ուշադրությունից վրիպել է այն հանգամանքը, որ դրանով իսկ ավելի է բարդանում ճառագրի բարձրաստիճան հոգևորական լինելու իրողությունը. նախ ասում է, որ ճառը Նարեկացու հասուն շրջանի գործերից է և գրվել է Մատյանից առաջ, ապա կարծում է, որ Հովհաննեսը մահացել է Մատյանն ավարտելուց հետո, հետևաբար՝ Գրիգորը կարող էր վանահայր դառնալ միայն այդ ժամանակ: Մինչդեռ ճառը, ինչպես ասվեց, գրվել է Մատյանից առաջ, որտեղ հեղինակն իրեն անվանում է բարձրաստիճան հոգևորական: Ինքնին

⁴ Տե՛ս **Հ. Միրզոյան**, Պատմաբանասիրական դիտողություններ Նարեկացուն վերաբերված ճառի մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, № 2, էջ 38-39:

⁵ **Հ. Թամրազյան**, Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ / Մատենագիրք հայոց, Ժ հատոր, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 1038, տե՛ս նաև **նույնի** Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, գիրք Ա, Եր., 2013, էջ 274:

⁶ **Հ. Թամրազյան**, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, գիրք Ա, էջ 250:

հասկանալի է, որ Մատյանից առաջ գրված Ճառում իրեն բարձրաստիճան հոգևորական հայտարարող հեղինակը և Մատյանից հետո վանահայր դարձած Գրիգորը չեն կարող լինել նույն անձը:

Ժամանակին «Մատենագիրք հայոց» մատենաշարի Ժ հատորի համար կազմելով Ճառի քննական բնագիրը⁷ հեղինակել էմ հատուկ հոդված՝ կատարելով պատմաբանասիրական որոշակի դիտողություններ, բայց պատկանելության հարցը չէմ քննարկել, այլ միայն եզրակացրել էմ. «4. Գրիգոր Նարեկացու երկերի հետ Ճառի ունեցած գաղափարական-բովանդակային ու լեզվամտածողական բացահայտ ընդհանրությունները լիովին հիմք են տալիս պնդելու, որ Ճառն անառարկելիորեն նարեկյան դպրոցի գրական արգասիք է»⁸: Անցած տասնամյակում շարունակելով այդ ուղղությամբ գիտական պրպտումներս՝ ի հայտ եմ բերել Ճառի հեղինակի մասին մի շարք նոր տեղեկություններ, որոնք հստակ պատասխանում են այն հարցին, որ եթե Գրիգոր Նարեկացին չէ Ճառի հեղինակը, ապա ո՞վ է, որ մինչև օրս մնացել է անհայտ:

Սովորաբար նման դեպքերում գիտնականները փորձում են բովանդակային ու ձևական որոշակի ընդհանրություններ տեսնել այս կամ այն հեղինակին ստուգապես պատկանող ստեղծագործությունների և իրենց հետաքրքրող երկի միջև: Անշուշտ, այդ մեթոդը շատ հաճախ արդարացնում է իրեն, բայց երբեմն հետազոտողը, խիստ շահագրգռված լինելով անպայման «ապացուցել» իր միտք բանին, ընկնում է ծայրահեղությունների մեջ և ամենաչնչին, ոչ էական նմանությունը կամ ընդհանրությունը բավական է համարում ասելիքը հաստատելու համար: Հաշվի առնելով հենց այդ հանգամանքը՝ սույն հոդվածում կփորձենք ընթերցողի ուշադրությանը ներկայացնել գերազանցապես նույնանման հարցերի շուրջ Գրիգոր Նարեկացու երկերում և Ճառում դրսևորված մտածողությունների տարբերությունը, որը, անշուշտ, ապացուցողական ավելի մեծ գորություն ունի, քան միայն նմանությունների սոսկական արձանագրումը:

Բերենք դրանցից մի քանիսը:

1. Ճառասացը իբրև բարձրաստիճան հոգևորական, ի տարբերություն դասական հոգևորականների, վաղ հասակից չի մտել եկեղեցի, ամբողջ կյանքը չի անցկացրել նրա պատերից ներս՝ աշխարհիկ կյանքից կտրված ու մեկուսացած, այլ զգացվում է, որ եկեղեցական դառնալուց առաջ եղել է աշխարհիկ գործիչ, ճանաչել աշխարհիկ կյանքի դժվարություններն ու խնդիրները, անձամբ ճաշակել դրանց պատճառած հաճույքներն ու տհաճությունները: Այստեղից էլ Ճառի հեղինակը ըմբռնումով ու ներողամտությամբ է վերաբերվում աշխարհիկ մարդկանց, միչդեռ չափազանց խստապահանջ ու անզիջում է հո-

⁷ Տե՛ս «Մատենագիրք հայոց», Ժ հատոր, Ժ դար, էջ 1040-1072:

⁸ **Հ. Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 48:

գևորականների հանդեպ: Բանն այն է, ասում է նա, որ աշխարհականը սխալվելու, մեղանչելու դեպքում կարող է արդարանալ իր անգիտությամբ, մինչդեռ հոգևորականը նույնն անել չի կարող, որովհետև «եկեղեցականացն անարատ եւ մաքուր վարքն է, ասէ առաքեալ, «սին եւ հ[աստատութիւն] աշխարհի, եւ յորժամ արար եւ վնաս լինի յեկեղեցականսն, խախտի եւ փուլ գայ աշխարհս եւ նոքա աւերման եւ արեանց հեղման պարտական գտանին. յոյժ զգուշութեամբ եւ մեծաւ սուկմամբ դողալի է մեզ ահագին մեղացն, որ գործի յեկեղեցականսն: Զի որքան սուկալի է յեկեղեցուց պոռնկել, քան արտաքոյ. նոյնքան է ի ներքոյ կարգի մեղանչելն, քան աշխարհականի, որ պատճառել զանգիտութիւնն կարեն, եւ մեք ոչ կարենք աղ գուլով եւ լոյս կոչեցեալ, գոր թէ անհամիւք, ո՛չ յաղբ եւ ո՛չ երկիր ենք պիտանացու: Եւ «թէ լոյսդ, որ ի քեզ է խաւար է, խաւարն որչափ եւս»»⁹ (այս և հետագա ընդգծումներն իմն են - Ն. Մ.):

Ընդհակառակը, դիմելով աշխարհիկներին, ասում է. «**Հայեցարուք ի ձեզ, զի յայլ կեանս եւ յայլ աշխարհ փոխելոց էք**, ուստի եւ յայս կեանքս այլ չէ հնար դառնալ, զի ով որ աստ վաստակի, անդ հանգչի, եւ ով աստ հանգչի, անդ չարչարի, քանզի եւ այս չափաւոր եւ սակաւ կենալքս իմաստունքն յաւիտենից հանգիստ գուզին անեզր եւ անսպառ մշտնջենաւորութեամբ, իսկ տխմարքն եւ ծոյլքն դառն տանջանաւք գուզին եւ աւգնական ասեն: Անդ զանեզրական եւ զանսպառ հանգիստն գտցուք, եւ աշխարհականին աշխարհն սգոյ եւ աղետի անուն է եւ ողբոց, **զի աշխատելի է աշխարհականն ի բազում հոգոց եւ ի ցնորից եւ ի ցաւոց պաշարեալ ի կնոջէն եւ ի տղայոց, ի յաւագաց եւ ի բռնաւորաց, ի դիւաց եւ ի մարմնաւոր կարեաց. եւ աստ քանի՛ ուժ պիտոյ է, քաջութիւն եւ արթնութիւն եւ առ Աստուած երախտիք եւ աղաւթք, եւ սուրբք ամենայն բարեխաւս, զի ձեռն կարկառէ Աստուած, եւ չընկղմի ի խորս անդնդոց եւ ի պտոյտս ջրոց**, եւ անմոռաց ունել զմահն ի մտի, եւ զերկիւղ դատաստանին Աստուծոյ եւ զհամար պարտուցն ահաւորատենին»¹⁰: Քանի որ շատ դժվար է դիմանալ աշխարհիկ կյանքի հրապույրներին ու գայթակղություններին և ազատ մնալ ախտերի կապանքներից, այդ պատճառով էլ աշխարհիկը վաղ հասակում զգուշանում ու պահում է անմեղությունը և Աստծու շնորհը: Իսկ եթե սայթաքում ու մեղք է գործում, ապա չպետք է հուսահատվի և առանց ապաշխարելու կորչի, որովհետև ինչպես երկյուղը պիտանի է անմեղներին, նույն ձևով հույսը պիտանի է մեղանչողներին, քանզի երկյուղը թույլ չի տալիս «անկանել», իսկ հույսը «չթողու յանկմանն», որովհետև Աստուծո նորմաձությունից «չէ հեռի ապաշխարողն, եւ ապաշխարողն է, որ դառնայ ի մեղաց և ապաշխարէ զիր անցեալ ունայնութեամբ զկեանսն եւ յառաջակայէն զգուշանայ պահաւք եւ աղաւթիւք, ողորմութեամբ եւ

⁹ «Մատենագիրք հայոց», Ժ հատոր, Ժ դար, էջ 1060-1061:

¹⁰ Նույն տեղում, էջ 1061-1062:

լռութեամբ եւ խոնարհութեամբ»¹¹: Եթէ այսպիսին է հոգևորական և աշխարհիկ հավատացյալների մասին ճառագրի պատկերացումը, ապա Նարեկացու ստեղծագործություններում այդօրինակ ընդգծված տարբերությունն ըստ էության չենք տեսնում:

2. Ճառի հեղինակը մեզ ներկայանում է որպես հայ ժողովրդի ներկայով ու ապագայով մտահոգված մտածող, որը հնարավոր ուղիներ է որոնում ստեղծված ծանր վիճակից նրան դուրս բերելու համար, ուստի հույս է հայտնում, որ Աստված կտեսնի ինչպես համայն մարդկության (իհարկե, առաջին հերթին նկատի ունի քրիստոնյաներին), այնպես էլ մեր ազգի անկյալ վիճակը, կշտապի ընկերանալ նրա հետ և ըստ կարելիության օգնել նրան: Աստված, ասում է ճառագիրը, «...Հայեսցի եւ ինքն այժմ յիւր անեզրական բարիսն, եւ իւրական գթութեամբն յիւր արարածս, եւ բացեալ զաննիրհելի եւ զողորմած ակն՝ տեսցէ զկարիս եւ զկարաստութիւն աշխարհիս, եւ լցուսցէ զպակասութիւն ամենեցուն յանձախելի ծովէն եւ յաւգնել մեզ նայեսցի ի տկարացեալ բնութիւնս, եւ **փութասցի յընկերել անկեալ եւ կործանեալ ազգիս մերոյ ի պէս պէս եւ ի զանազան խորխորաստս**»¹²: Կարծում եմ՝ հայտնագործություն արած չէմ լինի, եթէ ասեմ, որ 2015 թ. ապրիլին Հռոմի Ֆրանցիսկոս պապի կողմից Տիեզերական վարդապետ հռչակված Գրիգոր Նարեկացու թե՛ գլուխգործոց Մատյանում և թե՛ ընդհանրապես նրա մատենագրական հարուստ ժառանգության մեջ անհնար է գտնել մեր ազգի մասին այսօրինակ ցանկություն կամ երազանք:

3. Ճառի հեղինակի և Գրիգոր Նարեկացու մտածողությունների տարբերությունը, եթէ չասենք հակադրությունը, ամենից ակնառու ի հայտ է գալիս աստվածաշնչյան անպտուղ թզենու առակի ընկալման ու մեկնաբանման հարցում: Ինչպես գիտենք, այն Աստվածաշնչում պատմվում է երկու տարբերակով. ա) Մատթեոսի և Մարկոսի ավետարաններում ասված է, որ ճանապարհ գնալիս Հիսուսը քաղց է զգում և հեռվից տեսնելով մի տերևալից թզենի՝ քաղցը հագեցնելու հույսով մոտենում է նրան, բայց ոչինչ չի գտնում նրա վրա, այլ միայն տերևներ, «որովհետև տակավին թզի ժամանակը չէր»: Չնայած դրան՝ ըստ երեւոյթին զայրանալով թզենու վրա, անիծում է, որ այլևս պտուղ չտա: Ըստ Մատթեոսի Ավետարանի՝ թզենին անմիջապես չորանում է, իսկ ըստ Մարկոսի Ավետարանի՝ միայն հաջորդ առավոտյան են նույն ճամփով անցնելիս տեսնում, որ թզենին չորացել է: բ) Նույն առակը բոլորովին այլ բովանդակություն ունի Ղուկասի Ավետարանում (զլ. ԺԳ): Այստեղ Քրիստոսը ոչ թէ անիծում է թզենուն, այլ պարզապես պատմում է, որ մի մարդ իր այգում թզենի էր տնկել և պտղի ժամանակ պտուղ չգտնելով նրա վրա՝ այգեգործին ասում է, որ երեք տարի գալիս ու պտուղ չի գտնում, ուստի ավելի ճիշտ կլինի կտրել այն: Այգեգործը

¹¹ Նույն տեղում, էջ 1062:

¹² Նույն տեղում, էջ 1068:

խորհուրդ է տալիս ևս մեկ տարի խնամել, և եթե նորից պտուղ չտա, ապա միայն կտրել: Ինչպես տեսնում ենք, Մատթեոսի և Մարկոսի ավետարաններում Քրիստոսը միանգամից բարկանում է թզենու վրա և անիծում այն, մինչդեռ Ղուկասի Ավետարանում այգեգործը, որ անձամբ խնամել էր թզենին, ավստասալով իր կատարած աշխատանքը, անմիջապես չի համաձայնում կտրել ծառը¹³: Դիտելի է, որ թե՛ Նարեկացին և թե՛ Ճառի հեղինակն առդիմում են անպտուղ թզենու առակին, բայց դրսևորում են էապես տարբեր մոտեցում ու վերաբերմունք: Գրիգոր Նարեկացին ըստ էության 1-ին տարբերակի կողմնակիցն է, ուստի Մատյանի Բան Թ-ում իրեն նմանեցնում է անպտուղ, բայց «ստուարաստեղն» թզենու և արժանի համարում նույնպիսի խիստ վերաբերմունքի, որին արժանացավ թզենին: Երկրորդ դեպքում (Բան ՁԱ) սին սաղարթով պաճուճված, բայց պտղագուրկ թզենուն համարում է «ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեանս»: Ի հակադրություն Նարեկացու՝ Ճառի հեղինակը հետևում է Ղուկասի Ավետարանի ավանդույթին և այգեգործի նման կոչ անում համբերության ու հանդուրժողության: Ըստ այդմ՝ դիմելով հասարակության ամենատարբեր շերտերի ներկայացուցիչներին՝ ճարտարապետ, երկրագործ, հովիվ, ըմբիշ, զինվոր, ցանկասեր և իգամուլ, կին, ծեր, երիտասարդ, կաթողիկոս, եպիսկոպոս, քահանա, արեղա և կրոնավոր, փարթամ, աղքատ, գեղեցկություն, առողջություն, ուժի զորություն, «շնորհ բանի» կամ արհեստ ունեցող, թագավոր կամ իշխան՝ մեկ առ մեկ բացատրելով, թե ով ինչ պետք է անի կամ ինչպես պետք է իրեն պահի, որպեսզի ընդունելի լինի Աստծո համար: Ահա հենց այս կապակցությամբ էլ, դիմելով «բանավոր երկրի» երկրագործին, գրել է. «Հայեաց ի քեզ, զի եթե իցես երկրագործ բանաւոր երկրի՝ քեզ եւ այլոց զամենայն մասունս հոգւոյդ եւ զգայարանդ մարմնոյդ պտղաբերեա Աստուծոյ. **զանպտուղ թզենին մի փութով հատաներ, այլ աղաչեա՛ զԱստուած՝ խնայել. թէ լինի յաշակերտացն ոք ծոյ, քրքրեա երկիւղի դատաստանին Աստուծոյ եւ ա ըկ աղբ զնախատանացն զբանս, թերես արասցէ պտուղ եւ կերակրեսցէ զՏէրն քաղցեալ մարդկան փրկութեան եւ այսպէս ընդդէմ կալ զայրացման եւ բարկութեան ախտիցն**»¹⁴: Ինչպես տեսնում ենք, ճառասացը, հանդես բերելով մանկավարժական բացառիկ կարողություն և ընդգծված մարդասիրություն, խորհուրդ է տալիս կրթելիս դրսևորել համբերատարություն և ամեն կերպ ջանալ բացահայտել աշակերտի, նույնիսկ ամենաձուլի ունակությունները: Իսկ որ շատ կարևոր է, ընդհանրապես մերժում է զայրույթն ու բարկությունը, որոնցով դեկավարվելու դեպքում անհնար է հասնել դրական արդյունքի:

Արդ, վերը շարադրվածը, կարծում եմ, լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ Ճառի հեղինակն անկասկած Գրիգոր Նարեկացին չէ:

¹³ Տե՛ս Ղուկաս, ԺԳ, 9:

¹⁴ «Մատենագիրք հայոց», Ժ հատոր, Ժ դար, էջ 1054:

Այս դեպքում փաստորեն Ճառի հեղինակային պատկանելության հարցը մնում է չլուծված, թեև, ինչպես ասացի, այն անառարկելիորեն նարեկյան դպրոցի գրական արգասիք է: Եթե այդպես է, ապա իրավամբ հարց է ծագում. նարեկյան դպրոցի ականավոր ներկայացուցիչներից (Խոսրով Անձևացի, Անանիա Նարեկացի, Հովհաննես և Գրիգոր Նարեկացիներ) ո՞վ է Ճառի հեղինակը: Իհարկե, վերը շարադրվածից տրամաբանորեն բխում է, որ եթե ճառագիրն առժամանակ եղել է աշխարհիկ գործիչ, բայց հանգամանքների բերումով հետագայում դարձել է հոգևորական, ապա նարեկյան դպրոցի պատմությունից հայտնի է, որ այդպիսի կենսագրություն ունեցել է Գրիգոր Նարեկացու հայր Խոսրով Անձևացին: Բարեբախտաբար վերջինիս անունով մեզ հասած «Մեկնութիւն աղօթից պատարագին» մեծարժեք աշխատության մեջ հեղինակը հայտնել է անչափ կարևոր մի տեղեկություն, որը վկայում է, որ Ճառի իրական հեղինակը ոչ այլ ոք է, քան Խոսրով Անձևացին: Իր այդ աշխատության մեջ անդրադառնալով հավատացյալների կողմից սուրբ գրքերի նկատմամբ ոչ պատշաճ, մասամբ և մերժողական վերաբերմունքի հարցերին՝ կարծում է, որ Սուրբ գրքի խոսքն ունկնդրելիս կամ ընթերցելիս հավատացյալը չպետք է մտովի զբաղվի կենցաղային խնդիրներով, այլ պետք է ամբողջովին մտասևեռվի քննարկվող հարցերի վրա, որպեսզի կարողանա ճիշտ ընկալել ու հասկանալ դրանք: Ըստ այդմ գրել է. **«Բայց զի յայլում վայրի ասացեալ է մեր վասն որք ոչ կարևոր համարին զունկնդրութիւն գրոց սրբոց, աստանօր հարկ համարիմ սակաւ ինչ ասել առ այնոսիկ որք ասենն, զի լսեմ և ոչ առնեմ՝ ապա բնաւ և ոչ լսեմ, զի մի աւելի դատեցայց»**¹⁵: Այնուհետև պարզաբանելով սուրբ գրքերի բովանդակության ճիշտ յուրացման կարևորությունը՝ Անձևացին բացատրում է, որ Աստված բնակվում է հեզերի և խոնարհների մեջ, որոնք դողում են Աստծո խոսքերից: Ուստի աստանան ամեն ինչ անում է, որ այդպիսիները տարվեն կենցաղային անկարևոր գործերով և չլսեն ու չհասկանան Աստծու ճշմարիտ խոսքը: Աստված, ասում է Խոսրով Անձևացին, աստվածային խոսքը ճիշտ ընկալողներին անձամբ տալիս է իր հանդեպ երկյուղի զգացում և բնակվում նրանց մեջ: Իսկ ում մեջ Աստված է բնակվում, նրա համար դժվարինը դառնում է դյուրին, իսկ դառն տառապանքը՝ քաղցր: Իր այս միտքը հաստատելու համար նա հիշեցնում է Ղազարոսի քույրերից Մարիամի օրինակը՝ գրելով. **«Մարիամ՝ ասէ Տէրն, մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի՝ ի նմանէ, զի նստէր առ ոտս Տեառն և լսեր զբանս նորա»**¹⁶:

Ինչպես տեսանք, Անձևացին շատ հստակ ասում է, որ այս ամենի մասին «**յայլում վայրի ասացեալ է մեր**», ուստի այստեղ հարկ է համարում «**սակաւ ինչ ասել առ այնոսիկ**», այսինքն՝ աստվածային խոսքը

¹⁵ Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն աղօթից պատարագին, Ս. Ղազար-Վենետիկ, 1869, էջ 8:

¹⁶ Նույն տեղում, էջ 10:

չհարգողների ու ճիշտ չլսողների մասին: Բնական է՝ «յայլում վայրի» ասելով գիտնական-հեղինակը հասկանում է իր մեկ այլ աշխատություն, որը գրել է Պատարագի մեկնությունից առաջ: Եվ ահա պարզվում է, որ «յայլում վայրի» ասվածը հենց մեզ հետաքրքրող ճառն է, որը սկսվում է նույն հարցերի քննարկմամբ, բայց տրվում է անհամեմատ ավելի ընդարձակ պատասխան, քան Պատարագի մեկնության մեջ: Բավականին ծավալուն ներածական խոսքից հետո ճառագիրը շարունակում է. «Եւ այտքիկ այսքան պատճառս պատասխանաց առ այնտսիկ, որ այլազգ ինչ զմտաւ ածեն յաղագս մեր, բաւականասցի. ժամ է այտուհետեւ զմովսէսական բանն յաշտանակի դնել եւ մանաւանդ զձեզույն Սրբոյ, զոր ի նմա խաւսեր վասն պիտոյից բազմաց, զի լոյս տայ ամենցուն, որ ի տան իցեն, այսինքն է եկեղեցի Աստուծոյ կենդանույ, եւ չդնել ի ներքոյ մահճացն, որ է հեղգութիւն եւ անհոգութիւն: Քանզի որք կամին վաստակել զառակաւոր բանս Գրոց եւ ի մեկնող աշտանակի դնել, նոքա են, որք «ընդ մահճաւք» դնեն եւ ընդ գրուանաւ, որ է չափ, որ այսինքն է չափաւոր կենացս ի հոգւոյն չպարապել յաստուածայնոյն բանից պարզելոյն, այլ զայն դնել վերագոյն, **զոր Տէրն մեղադրեաց Մարթայի քեռն Ղազարու, որ գրադեալ էր յոլովիւք՝ ասելով «Աստ սակաւ ինչ պիտոյ է»:** Եւ արդ, **զՄարիամայն ընտրելով մասն, նորին Տեառն ողորմութեամբն նստելով առ ոսոս նորա՝ հարցցուք եւ ուսցուք ի նմանէ եւ յաշտանակս մերոց մտացս եւ բանիցս ծանցուք զնմանէ տուեալն.** նախ՝ զանաւթն լուսընկալ, եւ ապա՝ զվառումն ճրագին, եւ այսպէս է անաւթն մովսիսական գտեալ եւ պարզեալ մաքրողական բանիւ Հոգւոյն Սրբոյ, յայտնեալ զպիտանացու բանն, որ ասէ. Հայեա՛ց ի քեզ, զգոյ՛ջ լեր անձին քում, գուցէ լինիցի բան ծածուկ ի սրտի քում անաւթն»¹⁷:

Կարծում եմ՝ դժվար չէ համոզվել, որ նույն միտքը ճառում բացատրված է ավելի հանգամանորեն ու ծավալուն, քան Պատարագի մեկնության մեջ: Վերջինում չեն հիշատակվում Ղազարոսի և Մարթայի անունները, այլ նշվում է միայն Մարիամի անունը, մինչդեռ Ղուկասի Ավետարանում Մարթայի մասին ավելին է ասված, քան Մարիամի մասին, քանզի այս պատմության մեջ նա է գլխավոր գործող անձը, որովհետև մարմնավորում է Տիրոջ խոսքը չկարևորող, անուշադրությամբ լսող կամ ընդհանրապես անտեսող հավատացյալներին, որոնց մասին խիստ հանդիմանանքով է խոսվում թե՛ Պատարագի մեկնության մեջ և թե՛ ճառում: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ հարկ եմ համարում ամբողջությամբ բերել Ղուկասի Ավետարանում այդ մասին պատմվածը՝ «Այց Մարթային եւ Մարիամին» (զլ. Ժ). «38 Եւ մինչ նրանք գալիս էին, Յիսուս մտաւ մի գյուղ, եւ Մարթա անունով մի կին նրան ընդունեց իր տան մէջ: 39 Եւ սա մի քոյր ունէր, որի անունը Մա-

¹⁷ «Մատենագիրք հայոց», Ժ հատոր, Ժ դար, էջ 1044:

րիամ էր, որ եկաւ նստեց Տիրոջ ոտքերի առաջ եւ լսում էր նրա խոսքերը: 40 Իսկ Մարթան, որ զբաղուած էր տնային շատ գործերով, եկաւ կանգնեց նրա մոտ և ասաց. «Տէ՛ր, քեզ փոյթ չէ՞, որ քոյրս ինձ մենակ է թողել ծառայութեան գործի մէջ. արդ, ասա՛ դրան, որ օգնի ինձ»: 41 Յիսուս պատասխանեց ու ասաց. «Մարթա՛, Մարթա՛, դու հոգ ես անում եւ շատ բաներով ես զբաղուած, 42 բայց այստեղ քիչ բան է պետք. Մարիամը ընտրել է լաւ մասը, որ նրանից չպիտի վերցուի»¹⁸: Փաստորեն Քրիստոսը, անտեսելով Մարթայի զայրույթը, մասամբ հանդիմանում է նրան և, ընդհակառակը, դրվատում Մարիամի վարքագիծը, որովհետև վերջինս անտեսել էր կենցաղային մանրուքները և համակ ուշադրություն դարձած լսել Տիրոջ խոսքը: Իսկ տվյալ պահին հենց դա էր կարևորը, մինչդեռ կենցաղային հարցերով Մարթայի զբաղվածությունը խանգարում էր նրան՝ ինչպես հարկն է ճիշտ ընկալելու և հասկանալու Տիրոջ փրկարար խոսքը:

Կարծում եմ՝ ակնհայտ է, որ ներկա դեպքում գործ ունենք նույն երևույթի հեղինակային երկու մեկնաբանության հետ, որոնցից ճառի տարբերակն ավելի ծավալուն է, քան Պատարագի մեկնության մեջ բերվածը: Ընդ որում, այդպես է գնահատում ինքը՝ Խոսրով Անձևացին՝ ասելով՝ «**յայլում վայրի ասացեալ է մեր վասն որք ոչ կարևոր համարին զունկնդրութիւն գրոց սրբոց**», իսկ այստեղ (աստանոր)՝ Պատարագի մեկնության մեջ, «**հարկ համարիմ սակաւ ինչ ասել**» այդ նույն մարդկանց մասին: Որ իսկապես նույն իրողության մասին Պատարագի մեկնության մեջ ասվածն անհամեմատ ավելի սեղմ է, քան ճառում գրվածը, երևում է թեկուզ այն բանից, որ թեև Մարթան է այս պատմության գլխավոր հերոսը, սակայն մեկնության մեջ նրա անունը նույնիսկ չի հիշատակվում:

Վերը շարադրվածը լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ ավանդաբար Գրիգոր Նարեկացուն վերագրված մեծարժեք ճառի հեղինակը ոչ այլ ոք է, քան X դարի հայ ականավոր մտավորական, նարեկյան դպրոցի աչքի ընկնող ներկայացուցիչ, Գրիգոր Նարեկացու հայր Խոսրով Անձևացին:

Ճառը Խոսրով Անձևացուն վերագրելու դեպքում կամա թե ակամա ստիպված ենք վերանայելու հայագիտության մեջ արմատավորված առանձին կարծիքներ ու տեսակետներ: Օրինակ՝ վերանայման կարիք է զգում այն տեսակետը, որ իբր Խոսրով Անձևացին եպիսկոպոս է ձեռնադրվել 950 թվականին: Դրա համար հիմք է ծառայել այն փաստը, որ այդ թվականին է Անձևացու Սահակ որդին ընդօրինակել հոր «Պատարագի մեկնություն» աշխատությունը: Մինչդեռ ճառից պարզվում է, որ այն գրվել է Պատարագի մեկնությունից առժամանակ առաջ, երբ հեղինակը եղել է բարձրաստիճան հոգևորական՝ թեմի առաջնորդ կամ վա-

¹⁸ Ղուկաս. Ժ, 38-42:

նահայր, այլապես հազիվ թե նա իրավունք ունենար գատկական ավագ հինգշաբթի օրը կատարվող ոսնկվայի հանդիսավոր արարողության ժամանակ այնտեղ հավաքված հոգևորականների ոտքերին «արկանել ջուր»:

Ինչպես ասվեց, Ճառը անառարկելիորեն արգասիք է Անձևացու գրչի: Ըստ այդմ, անհապաղ վերանայման է ենթակա Գրիգոր Նարեկացու ծննդյան թվականը: Բանն այն է, որ ժամանակին առանց որևէ հիմնավորման Մ. Չամչյանը Նարեկացու ծննդյան թվական է համարել 951 թվականը, որը թեև քննադատել ու մերժել են շատերը, բայց ավանդույթի ուժով պահպանվում է առ այսօր, մինչդեռ բացահայտորեն հակասում է Անձևացու և Գրիգոր Նարեկացու կենսագրական տվյալներին: Մի կողմից ասվում է, որ Գրիգորի ծննդից հետո մահացել է նրա մայրը, և հայրը դարձել է հոգևորական, 950 թ. ձեռնադրվել եպիսկոպոս, իսկ մյուս կողմից պնդում են, որ Գրիգորը ծնվել է 951 թ., այսինքն՝ հոր եպիսկոպոս ձեռնադրվելուց մեկ տարի հետո, որը, ինչ խոսք, միանգամայն անտրամաբանական է: Ըստ այդմ, Գրիգոր Նարեկացին ծնված պետք է լինի անպայման 950 թ. առաջ, իսկ քանի որ Ճառը գրվել է Պատարագի մեկնությունից մի քանի տարի առաջ, երբ Անձևացին արդեն եղել է եպիսկոպոս, այստեղից հետևում է, որ, ինչպես իրավացիորեն ենթադրել են մի շարք գիտնականներ, նա ծնվել է 945 թվականին:

Ճառը Խոսրով Անձևացու գրչի արգասիք լինելու փաստը գալիս է հավաստելու հայագիտության մեջ թեականորեն արտահայտված այն տեսակետը, «որ Խոսրով Անձևացին գրել է մեկնողական, խրատական, հակաճառական բնույթի նաև այլ գործեր, որոնք չեն պահպանվել»¹⁹ կամ գուցե պահպանվել են, բայց առայժմ անտեղյակ ենք այդ մասին:

Բանալի բառեր – *մատենագրական ժառանգություն, անանուն ստեղծագործություն, վերագրված երկեր, հեղինակային պատկանելություն, նարեկյան դպրոց, Ճառ, պատարագի մեկնություն, հոգևորական և աշխարհիկ հավատացյալ, անպտուղ թզենի*

ГРАЧИК МИРЗОЯН – Кто автор приписываемой Григору Нарекаци речи? – В статье ставится вопрос об авторстве текста, известного как «Речь, произнесённая св. Григором Нарекаци», и показано, что это литературное произведение действительно отмечено чертами школы Нарецкого монастыря, но не принадлежит перу Григора Нарекаци.

На деле автором проблемной речи является видный писатель X века, церковный иерарх Хосров Андзеваци. В обоснование этой точки зрения параллельно приводятся противоречащие одно другому, временами противоположные суждения о схожих явлениях, изложенные в «Книге скорбных песнопений» Григора Нарекаци и в названной речи, и делается вывод, что Григор Нарекаци не мог выражать взаимоисключающие точки зрения об одних и тех же явлениях. Неопровержимые факты доказывают, что

¹⁹ Հրայր Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, գիրք Ա, էջ 27:

Хосров Андзеваци написал речь прежде «Комментария к литургии», уже будучи духовным лицом высокого сана.

Ключевые слова: рукописное наследие, анонимное произведение, приписываемые [кому-либо] сочинения, авторство, школа Нарекского монастыря, речь, комментарий к литургии, верующие – клирик и мирянин, бесплодная смоковница

HRACHIK MIRZOYAN – *Who is the Author of the Speech Attributed to Grigor Narekatsi?* – Discussing the question of the authorship of the work “Speech by St. Grigor Narekatsi”, the author of the article shows that it is truly a literary product of the Narekian School but does not belong to Grigor Narekatsi himself.

The author of the Speech in question is, in fact, Khosrov Andzevatsi, a prominent bibliographer and a high-ranking church figure of the 10th century. To substantiate his point of view, the author of the article draws parallels, sometimes bringing examples of contradictory judgments about similar realities from Grigor Narekatsi’s “Book of Lamentations” and the Speech, and comes to the conclusion that Grigor Narekatsi could not have expressed contradictory views on the same reality, thus, he can’t be the author of the Speech. It is proved by irrefutable evidence that Khosrov Andzevatsi, a high-ranking clergyman, had written the Speech before his work “Interpretation of Divine Liturgy”.

Key words: *literary heritage, anonymous work, attributed works, authorship, Narekian School, Speech, interpretation of Liturgy, clergyman and secular believer, fruitless fig tree*

Ներկայացվել է՝ 05.07.2019
Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019